

# ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Դադարի՛ր վախենալուց  
Մաս 5

«Հանկարծահաս երկյուղիցը չես վախենա...  
Որովհետև Տերը կլինի քո հույսը.»  
Առակաց 3:25-26

Մատթեոս 8:23-27 – Հիսուսն և ալեկոծումը

## 1- Հինգ փաստեր ճգնաժամերի վերաբերյալ

- Դրանք անխուսափելի են

«...երբոր կերպ կերպ փորձանքների մեջ ընկնեք.» Հակոբոս 1:2

- Դրանք փոփոխական են

Կախված են իրա դրությունից Առակաց 1:27

Կախված են փոխհարաբերություններից Մաղմոս 102:7-8

Կախված են զգացմունքներից Հոբ 30:22

- Դրանք անկողմնակալ են

«Նա անձրև է բերում արդարների և անիրավների վրա:»  
Մատթեոս 5:45

- Դրանք անկանխատեսելի են

«Եվ ահա մեծ ալեկոծում եղավ ծովի մեջ...» Մատթեոս 8:24

- Ես կարող եմ որոշել իմ վերաբերմունքը  
ճգնաժամի հանդեպ

## 2- Ինչպե՞ս դիմագրավել անսպասելի ճգնաժամերը

- Վերականգնիր Աստծո հետ ունեցած մտերմությունդ

«Եվ երբոր նա նավը մտավ, նրա աշակերտները գնացին նրա  
ետևից:» Համար 23

«Մի վախենար, որովհետև ես քեզ փրկել եմ, քո անուևովը կանչել եմ,  
թե դու իմն ես: Երբոր ջրերիցն անցնես, ես քեզ հետ եմ, և եթե  
գետերովը՝ նրանք քեզ չեն ողողել. երբոր գնաս կրակի միջովը, չես  
այրվել, և բոցը քեզ պիտի չվառի:» Եսայիա 43:1-2

- Հենվիր Աստծո հոգածությանը

«Աշակերտները նրան զարթնեցնում են և ասում նրան. Վարդապետ,  
հոգդ չ'է որ կորչում ենք:» Մարկոս 4:38

«Որովհետև նա տեղիցը հավիտյան չի շարժվի. հավիտենական  
հիշատակի համար կլինի արդարը: Չար համբավից չի վախենալ.  
նրա սիրտը պատրաստ է, որ Տիրոջը հուսա: Նրա սիրտը  
հաստատված է էլ չի վախենա, մինչև որ նայի իր նեղիչների վրա:»  
Մաղմոս 112:6-9

- Հենվիր Աստծո առաջնորդությանը

«Եվ նա զարթնելով քամիին սաստեց, և ասեց ծովին. Լռիր,  
պապանձվիր. և քամին դադարեց, և մեծ խաղաղություն եղավ:»  
Մարկոս 4:39

«Բարձրյալի ծածկոցի տակ բնակողը Ամենակարողի շուքի տակ է  
հանգստանում: Ես կասեմ Տիրոջը. Իմ ապավեն և իմ ամրոց, իմ  
Աստված, որին ես հուսացած եմ: Որովհետև նա կփրկի քեզ...դու չես  
վախենալ գիշերի զարհուրանքից, այն նետիցը որ թռչում է ցերեկը:»  
Մաղմոս 91:1-5

Հաջորդ Քարոզի Թեման  
ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ՔԵԶ ԷԼ ԳՈՐԾԱԾԵԼ  
Հովիվ Սարո Խաչիկեան